

İ Yi » ԵձձՁՁՁՁ

Ճգնաժամին չնայելով...

Գունավոր մետաղների միջազգային շուկայի բարդ պայմաններում անդրադառնում ենք կարելու ձեռնարկություններից մեկի՝ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությանը: Լինելով «Գեոպրոմայնինգ» ընկերությունների միջազգային խմբի մեջ՝ ձեռնարկությունը հաղթահարում է իր արտադրանքի առանց այդ էլ ցածր գների կտրուկ տատանումների հետևանքները նաև արտադրությունը ժամանակին վերափոխելու և թողարկման ծավալներն ավելացնելու շնորհիվ: Տարածաշրջանի համար ոչ պակաս բնապահպանական նշանակություն ունի շահագործվող թափոնավայրը, իսկ կոմբինատի սոցիալական կարելությունը հանրապետության ամենահարավային բնակավայրերի մարդկանց զբաղվածության ապահովումն է:

Ընկերությունում իրավիճակի մանրամասների մասին պատմեց «Ազարակի ՊՍԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Յու.Վ.Բերեզովսկին:



մետաղների շուկան բնութագրվում է անկայունությամբ: Դինամիկան տարբեր ուղղություններ ունի, առաջվա պես կարճաժամկետ հեռանկարի համար վատ կանխատեսելի: Օրինակ, ընթացիկ տարվա անցած շրջանում պղնձի գինը մեկ տոննայի հաշվով իջել է մինչև 4300 ԱՄՆ դոլար, ապա բարձրացել 5100 եւ կրկին իջել 4600 դոլար:

2015 թվականն աղետալի էր պղնձարդյունաբերության ոլորտի համար: Ի հեճուկս կայուն գների սպասումների է նույնիսկ փորձինչ աճի կանխատեսումների՝ տարեսկզբին պղնձի տոննայի գինը սրընթաց իջավ մինչև 5300 դոլար եւ ամբողջ տարվա ընթացքում տատանվում էր բավականաչափ լայն տիրույթում՝ միջինը կազմելով 5500: Սոլիդեթի գինը մնաց կայուն ցածր միջի վրա՝ առանց վերականգնման նշանների: Միջազգային վերլուծական կենտրոնների կանխատեսումների համաձայն պղնձի միջինացված գինն այս տարի կկազմի 5700 դոլար, մենք սպասում ենք 5600: Բնական է, այս իրավիճակը չի կարող լրջորեն չափել ձեռնարկության գործունեության վրա, սակայն կառավարման օղակն ամեն ջանք գործադրում է հակաճգնաժամային միջոցներով կայուն աշխատանքն ապահովելու համար, այդ թվում՝ սերտորեն համագործակցում է ԴՀ Կառավարության հետ՝ կաջրությունից դուրս գալու ուղիներ որոնելու առումով:

Արդեն որեւէ մեկի համար գաղտնիք չէ, որ կառավարությունը պատասխանատվության մեծ զգացումով եւ հոգատարությամբ վերաբերվեց կոմբինատի դժվարությունների նկատմամբ: Լիովին գիտակցելով մեր ձեռնարկության սոցիալական նշանակությունը Այոնիքի մարզի համար, համախառն մերձին արդյունքում մեր ունեցած ավանդը, կառավարությունը պատրաստակամորեն արձագանքեց օգնության մեր խնդրանքին, եւ ամենասեղմ ժամկետներում, երկրի բարձր ղեկավարության աջակցությամբ հսկողության տակ, կայացվեցին այնպիսի որոշումներ, որոնք կոմբինատին հնարավորություն տվեցին ստանալ հարկավոր աջակցություն եւ ապահովել կայուն ֆինանսատնտեսական գործունեություն:

– **Մեր նախորդ հարցազրույցում պոչուկային տնտեսության բարելավման հարցն առաջնայինն էր: Այս տարի այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկվե՞լ են:**

– Չնայած բարդագույն ֆինանսատնտեսական վիճակին, կոմբինատը շարունակում է պոչուկային տնտեսության ընդլայնման եւ վերա-

կառուցման ստանձնած պարտականությունների կատարումը: 2015թ. այդ ուղղությամբ մի շարք աշխատանքներ են կատարվել, այդ թվում՝ իրականացվել է N 1 պոչուկավայրի ընդլայնման նախագիծը Դավազամի կիրճում, կոլեկտորի աշխատանքային նախագիծը, ավարտվում է ներմղման ուղիների պոմպակայանի աշխատանքային նախագիծը: Գիտահետազոտական եւ նախագծային աշխատանքների ընդհանուր ծախսն արժեցել է կես միլիոն դոլար: Անցած տարվա սեպտեմբերից սկսել ենք կոլեկտորի կառուցման շինմոնտաժային աշխատանքը, որի համար հաշվարկել ենք 800 հազար դոլարի ծախս:

– **Վերոհիշյալ աշխատանքներն իրականացնելուց հետո կստացվի պոչուկների պահեստավորման լրացուցիչ 32 մլն խորանարդ մետր տարողություն, ինչպես նաև հնարավոր կլինի N 1 պոչուկավայրը միացնել շրջանաձեւ ջրապտույտի համակարգին:**

– **Այս ամենից հետո հաջորդ քայլը համարում էիք հանքաքարի քարոզման եւ տեսակավորման արտադրանքի վերափոխումը: Դասցրե՞լ եք այդ ուղղությամբ ինչ-որ քայլեր ձեռնարկել:**

– Ինչ վերաբերում է ձեռնարկության հետագա վերափոխումներին, ապա ներկայիս ցածր գների պայմաններում մեր հնարավորությունները շատ ու շատ սուղ են: Այսօր մենք սարքավորումների օգտագործման արդյունավետության բարձրացման քայլեր ենք ձեռնարկում, ինչն արդեն իրականացնում է: Օրինակ, ավելացնում ենք մետաղի կորզման աստիճանը, ի դեպ, փաստական աճի ենք հասել կազմակերպական մեթոդներով: Բարձրացնում ենք լեռնահանքային տեխնիկայի շահագործման գործակիցը, նվազեցնում կորուստները:

Շարունակում ենք աշխատանքը ՌԴ գիտահետազոտական եւ ճարտարաշինական կենտրոնների հետ՝ մեր արտադրության վերափոխման եւ արդյունավետության բարձրացման հարցերում:

Բարենպաստ շուկայական պայմաններում աչքի առաջ ունենք արտադրության ծավալը կրկնապատկելու ծրագիր, որի համար մշակված են համապատասխան ինժեներական որոշումներ, նախապատրաստված փաստաթղթեր եւ ֆինանսական հիմնավորումներ: Մեզ ի՞նչ է պետք. ընդամենը պղնձի եւ մոլիբդենի բարենպաստ շուկայի վերականգնում: Մենք առաջվա պես պատրաստ ենք սեղմ ժամկետում իրականացնել մշակված գաղափարները:

– **Մի քանի խոսք, եթե գաղտնիք չէ, ձեռնարկության այսօրվա կարողությունների եւ ծավալի մասին:**

– Ներկա պահին Ազարակի կոմբինատը գործում է հաստատված նախագծի համաձայն, որով տարեկան ծավալը 3,6 մլն տոննա հանքաքարի մշակումն է:

– **Ձեզ հաջողվո՞ւմ է նոր պայմաններում պահպանել բավորական կոլեկտիվը, վարչական ապարատի կազմը, աշխատավարձի, հավելավճարների եւ պարգևավճարների մակարդակը:**

– 2015 թվականի շատ ծանր ֆինանսական տարում կոմբինատի ղեկավարությանը հաջողվել է ոչ միայն խուսափել հաստիքների կրճատումից, այլև թույլ չտալ աշխատավարձի ուշացումներ կամ կրճատումներ, վճարել ենք պլանի կատարման համար հասանելիք պարգևավճարները: Ընթացիկ տարում ստիպված էինք հրաժարվել մի շարք խրախուսական վճարումներից: Ես չափազանց շնորհակալ եմ մեր կոլեկտիվին, մեր աշխատողներին այն բանի համար, որ բոլորն արժանապատվորեն եւ ըմբռնունով են ընդունել այդ որոշումները, որ որպես միասնական կո-

լեկտիվ աշխատում ենք ոչ թե միայն ամեն մեկն իր համար, այլև ամբողջ կոմբինատի կենսունակության, տարածաշրջանի կայունության ապահովման համար:

– **Ի՞նչ պլաններ ունեք:**
– Ինչ վերաբերում է այս տարվա պլաններին եւ ներդրումներին, ինչպես արդեն ասել ենք, նախատեսում ենք ձեռնարկության ընդլայնում եւ արդեն ունեցած կարողությունների արդիականացում, պոչուկային տնտեսությունում սկսված աշխատանքի շարունակում, բայց, կրկնում եմ, այս ամենը պայմանավորված է շուկայում մետաղի գների աճով եւ հետագա կայունացմամբ:

– **Մենք չխոսեցինք տարածաշրջանում, մասնավորապես Ազարակում, իրականացված սոցիալական ծրագրերի մասին:**

– Նույնիսկ այսօրվա անբարենպաստ պայմաններում մենք ընկալում ենք կոմբինատի վրա դրված ամբողջական պատասխանատվությունը որպես քաղաքաստեղծ ձեռնարկություն Ազարակ, Մեդրի քաղաքների, մոտակա բնակավայրերի համար: Ոչ մի պարագայում չենք կարող դադարեցնել մեր մասնակցությունը Ազարակի եւ ամբողջ Մեդրու տարածաշրջանին ցուցաբերվող սոցիալական օգնությունը: Շարունակում ենք ստանձնած սոցիալական պարտավորությունների կատարումը, թեեւ ֆինանսական մեծ դժվարություններ ունենք: Սոցիալական օգնությունը ներառում է տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ ուղղակի օգնություն քաղաքապետարանին, վետերանների եւ կարիքավոր մարդկանց աջակցության տարբեր ծրագրեր:

Ամբողջ, կշարունակենք աջակցությունը սահմանափակ գործափն՝ լիովին ըմբռնելով մեր տարածաշրջանում պետական սահմանի պահպանության վստահված տեղամասում ծառայության կարելությունը եւ բարոյությունը:

– **Հայաստանի Հանրապետությունը քաղաքական լայն փոփոխությունների շրջան է ապրում, անցած դեկտեմբերին ընդունվել է նոր սահմանադրություն: Այս առիթով ի՞նչ կարող եք ասել:**

– Ավանդաբար բիզնեսը ապաքաղաքական գործունեության ոլորտ է: Առավել եւս այնպիսի խոշոր ձեռնարկության համար, որպիսին մերն է, որն ուղղակի ազդեցություն ունի տարածաշրջանի, ինչպես եւ հանրապետության կյանքի վրա: Մեր ձեռնարկության գործառնայթը սոցիալական կայունության ապահովումը եւ այսօրվա ու վարվա հանդեպ մարդկանց հավատի ամրապնդումն է: Միայն այդ պայմաններում հասարակ մարդն ու քաղաքացին հնարավորություն կունենան հանգիստ զբաղվել իրենց, երեխաների ու թոռների նոր կյանքի կառուցումով: Հանրաքվեի արդյունքները վկայեցին մարդկանց ակտիվ մասնակցությունը, ինչը, իմ կարծիքով, նշանակում է, որ կոմբինատն իր գործառնայթը կատարում է, մարդիկ էլ հնարավորություն են ցանկություն ունեն մասնակցելու իրենց երկրի սոցիալական եւ քաղաքական կյանքին, ցույց տալ իրենց քաղաքացիական դիրքորոշումը եւ երկխոսություն մասնակցելու հետ:

Մենք չենք մասնակցում ընտրությունների, հանրաքվեների եւ քաղաքացիական ու քաղաքական այլ միջոցառումների կազմակերպմանը եւ անցկացմանը, սակայն, անկասկած, կոմբինատը մասնակցում է պետության կյանքին, եւ դժվար է թերազմահատել երկրի քաղաքացիների կյանքի մակարդակի օրավոր բարելավման եւ հանրապետության զարգացման գործում մեր ընկերության ավանդը:

Հարցազրույցը՝ ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Մարդասիրական օգնություն՝ մարզի քաղաքներից

«Այոնյաց երկիր» թերթի հրապարկումներից մեկում արդեն տեղեկացրել էինք մարզից դարաբաղա-արդրեջանական սահմանագիծ ուղարկվող սննդի եւ առաջին անհրաժեշտության պարագաների հավաքման եւ համակարգման աշխատանքների մասին: Այս օրերին քաղաքապետարաններն ուղարկված օգնության մասին պարբերաբար համապատասխան տեղեկատվություն են ներկայացնում հանրությանը:

Ապրիլի 15-ին Կապանի քաղաքապետարանի հրապարակած տեղեկատվությունից հայտնի դարձավ, որ Կապանից Արցախ է մեկնել 16 բեռնատար մեքենա, որ տեղափոխել է 3000 լ ըմպելիք եւ սնունդ, հագուստ, հիգիենիկ պարագաներ պարունակող 770 տարբեր չափի արկղեր, ինչպես նաև առանձին փաթեթավորված հագուստ: Ներկայումս դեռեւս կան պահեստավորված պարագաներ, որոնց տեղափոխումը եւս առաջիկայում կկազմակերպվի:

Այս օրերին ցուցաբերված դրամական աջակցությունը տրամադրվել է եւ կտրամադրվի կապանցի զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին: Քանի որ այս գործընթացը շարունակական է, ցանկը հետագայում հանրությանն առանձին կներկայացվի: Ի դեպ, կային քաղաքացիներ, ովքեր գումարը միանգամից փոխանցել են Արցախի կառավարության հատուկ հաշվեհամարին:

Կապանի «Ազատամարտ կոմիտե»-ի նախագահ Խորեն Հարությունյանից տեղեկացանք, որ «Դանդի փրկիչս մեթապ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Հրաչ Զաքարյանի տրամադրած դրամական աջակցությունը հասել է իր հասցեատերերին: Մասնավորապես՝ կապանցի զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրամադրվել է 2-ական մլն դրամ, իսկ վիրավորներից Թաթուլ Օտարյանին՝ 1 մլն, մյուս երեք կապանցի վիրավորներին (Արմեն Գրիգորյան, Պյոտր Բաղդասարյան, Արսեն Բաղայան)՝ 500 հազարական դրամ:

«ժամանակակից դիվանագիտության զարգացման հիմնարկում»-ի նախագահ, «Նոր Հայաստան» միջազգային շարժման առաջնորդ, քաղաքական եւ հասարակական բազմաթիվ նախաձեռնությունների հեղինակ, ուկրաինաբանական կապանցի Ամրան Պետրոսյանը Կապանի զոհվածների ընտանիքներին եւ վիրավորներին փոխանցեց արտասահմանում բնակվող կապանցիների հանգանակած դրամական աջակցությունը:

Քաջարանի քաղաքապետարանից տեղեկացանք, որ ապրիլի 25-ի դրությամբ ԼՂՀ սահմաններ է ուղարկվել մոտ 700 տարբեր չափի արկղ՝ սննդով, անհրաժեշտ հիգիենայի պարագաներով, դեղորայքով, հագուստով լի: Սահման են ուղարկվել նաև մեծ թվով լապտերներ: Հայտարարեցանական սահմանի նախիջեւանային հատվածում տեղակայված գործառնայթն ուղարկեց քաղաքացիներից համապատասխան պարագաներով ծանրորոշներ են ուղարկվել: Ինչպես բոլոր քաղաքներում, այստեղ նույնպես օգնություն են ցուցաբերել ոչ միայն առանձին քաղաքացիներ, այլև քաղաքում գործող բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները: Ապրի-



Նա վերջին գինավորը չէ

Տարեցտարի պակասում է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների թիվը: Այսօր Գորիսի տարածաշրջանում նրանք ընդամենը 17 հոգի են: «Ամենաերիտասարդը» Սմբատ Բալասանյանն է, ապրում է Խանածախում, 91 տարեկան է:

Շատ համայնքների նման Խանածախ մտնելիս գյուղի անունն ազդարարող ցուցանակից հետո ձեզ դիմավորում է Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանը, որ կառուցվել է այն տեղանքում, որտեղից գյուղն իր՝ դեռ բեղ ու մորուս չունեցող տղաներին ու արդեն ընտանիքատեր, երեխաներ ունեցող այրերի մեծ մասին ուղարկեց պատերազմ: Վերադարձողներին էլ դիմավորեցին այստեղ: Գնացին խմբերով, եկան մեկ-մեկ...

Հուշարձանն այս պատմում է, որ գյուղից ռազմաճակատ մեկնեց 245 հոգի, վերադարձավ միայն 136-ը: Կամաց-կամաց նրանք էլ գնացին: Նրանց վարած կյանքի միակ կենդանի վկան Խանածախում Սմբատ Բալասանյանն է, որի ծննդավայրի, նրա ու նրա տոհմի մասին էլ ցանկանում են պատմել:

Սահմանիմ կանգնած մեր այսօրվա տղաների նման Սմբատն էլ 18 տարեկան էր: 1944թ. գարունն էր: Պատերազմի ավարտին մնում էր մեկ տարի մեկ ամիս: Որպեսզի խուսափեն մտացածին հերոսություններ նրան վերագրելուց, ռազմաճակատային կյանքին չեն անդրադառնա: Պա վաղուց անհետաքրքիր է: Ուղղակի ցանկանում են պատմել գյուղացի մի պատանու մասին, ով իր կամքից անկախ, հարազատ գյուղից զատ մնացած աշխարհի հետ ծանոթացավ պատերազմի խրամատից, աշխարհի կեսն էլ անցավ ոտքով: Այդ դժվարին օրերին նրա անցած երթուղին այսպիսին է եղել՝ Չանգե-գուր-Երեւան-Թբիլիսի-Բելառուսական ճակատ-Բեռլին, իսկ հետո էլ՝ Հեռավոր արեւելք: Հաղթանակի լուրը լսեց Բեռլինում, իսկ պատերազմի ավարտի մասին՝ Ուստրիյսկում, որտեղ նրանց զորամասը մասնակցել էր Քվանտույան բանակի ջախջախ-



մանը: Հուշարձանի մոտից գյուղի գլխավոր փողոցի աջ ու ձախ մասերում բարձրանում են Սքանաց մեծ տոհմից սերվածների տները, այդ թվում՝ նաեւ Սմբատ Բալասանյանի տունը, որը գնացել, հանգրվանել է Մեչի թաղամասում: Տոհմի անդամները երկու ազգանուն են կրում՝ Սարգսյան եւ Բալասանյան: Բակունցի հայտնի պատմվածքի հերոսի նման Խանածախում էլ են տոհմին ցեղ անվանում: Ուրեմն այս հերոսի գերդաստանը՝ խանածախցիների լեզվով ասած՝ Սքանաց ցեղը, շատ բանով է հայտնի. ճանաչված տոհմի մարդիկ ֆիզիկապես ուժեղ են, աշխատասեր, ազնիվ: Ականատեսներ կան այն բանի, թե ինչպես է 16 տարեկան Գրիշա Սարգսյանը (հետագայում ավարտեց ֆիզկուլտիկոստիտուտը եւ երկար ժամանակ աշխատում էր Երեւանում, սպորտային թեքմամբ հատուկ դպրոցի տնօրեն էր) ինստիտուտի համար ապագա ուսանողներ «ընտրելու» նպատակով գյուղ եկած Երեւանի ֆիզկուլտիկոստի ինստիտուտի դասախոսներին ցուցադրել իր ուժը. կոլտնտեսության կալում երկու պարկ հաճար թելերի տակ, մեկական էլ՝ ձեռքերով բռնած, քայ-

լել է մոտ 50 մետր: Տոհմից սերվածները տիպիկ հայի օրինակ են. խաժական են, ոսկե-զանգուր, երկարակյաց: Անսահման հումոր ունեն: Հաճախ էլ իրենք են ստեղծում, պատմում այդ հումորը ու բոլորի հետ ծիծաղում դրա վրա: Գյուղում թեւավոր խոսք է՝ Սքանաց չափարի ծտերը «շաշ» են: Այդ ասացվածքը ծնվել է այսպես: Տոհմի նահապետներից մեկը՝ Սարգիսը (Սաքին), ով ժամանակի գրաճանաչ մարդկանցից մեկն է եղել, նկատում է, որ կաշաղակը գողանում է հավի ձուն, ուտում, բարձրանում մոտիկ ծառի կատարին ու իր արածի մասին աշխարհին պատմում: Նա թակարդ է լարում եւ բռնում կաշաղակին (բռնում է, ոչ թե սպանում): Գողը ոտքերի արանքում ֆիքսում է, սովարաթոթից էլ մի վահանակ կախում թռչնի վզից՝ «գող կաշաղակ» գրուքյամբ, եւ «հանցագործին» իջեցնում գյուղամեջ, ցույց տալիս համագյուղացիներին եւ կաշաղակին ազատում կալանքից՝ թողնելով վզից կախված ցուցանակը: Ուրեմն, գյուղս սկսվում է Սքանաց տներով եւ ավարտվում «ժիժի դոմով»: Այս վերջինս էլ, որ կոչվել է «որоежкий дом», կառուցվել է «Նիկոլի թվին»՝ գյուղի արեւելյան դարպասի մոտ, որպես ֆորպոստ եւ

այնտեղ տեղավորել կազակների ջուկատը՝ ամռան ամիսներին տարածքի հայկական գյուղերի վրա քրդերի, թաթարների կրկնվող հարձակումները կանխելու համար: Տարիների ընթացքում այդ երկու բառերը տեղացիները սեփականացրել են եւ այսօր էլ այդպես են կոչում՝ «ժիժի դոմ»: Կառույցը մինչեւ 1967թ. որպես միջնակարգ դպրոցի շենք է ծառայել: Գյուղի այս դարպասից ճանապարհը գնում է դեպի պատմական Ծիծեռնավանք եւ ազատագրված Մելիքաշեն:

Սաացի, որ հաղթանակի լուրը Սմբատը լսեց Բեռլինում: Շատերի նման նա էլ տուն վերադառնալու եւ ապագայի հետ կապված ծրագրեր էր մշակում: Սակայն նրա վերադարձը կայացավ միայն 1945թ. աշնանը, եւ այն էլ ոչ թե Բեռլինից, այլ՝ Հեռավոր արեւելքից:

Պատերազմից հետո սկսվել էր երկրի համատարած էլեկտրիֆիկացումն ու ռադիոֆիկացումը: Սմբատն այդ աշխատանքները գործնականում առաջին իրականացնողներից մեկն էր, հետագայում էլ ապահովում էր դրանց սպասարկումը՝ դառնալով «լույսի եւ ռադիոյի մարդ»՝ աշխատելով մինչեւ կենսաթոշակի անցնելը: Աջբերիս առաջ է կաշվել լայն գոտու ծայրերից կախված երկաթի հաստ ու ծանր պաշտպանական շրթան, էլեկտրասյուն բարձրանալու համար երկաթյա ոտքազաններ ուսին գցած, կապուտաչա, ծիծաղկոտ աչքերով մարդը: Այդ գործում Սմբատ Բալասանյանը մի դերակատարում էլ ուներ: Այն տարիներին ռադիոն կարելի էր համեմատել այսօրվա համացանցի հետ: Համարյա բոլոր գյուղերն ունեին այսպես կոչված ռադիոհանգույց, որտեղից օրվա որոշակի ժամերին հաղորդումներ, հայտարարություններ էին հնչում գյուղի աշխատավորների համար, «սփռվում» կոլտնտեսության նախագահի կարգադրությունները: Այդ գործը կատարում էր Սմբատ Բալասանյանը, որն էլ նրան առանձնացնում էր մնացած գյուղացիներից, դարձնում կարելի: Խանածախի ռադիոհանգույցը տեղավորված էր Մելիք Հայկազնի անարաթի կանգուն մնացած հյուրատան երկրորդ հարկում, որտեղ հասնելու համար Սմբատ քեռին պետք է անապայման անցներ մեր տան բակով: Այնպես որ, մանկության եւ պատանեկության տարիներին համարյա ամեն օր հանդիպել են նրան՝ նախագահից հետո գյուղի ամենակարեւոր մարդուն. գործը նրան դարձնում էր տարածաշրջանի անցուղարձին քաջատեղյակ անհատ:

Սմբատի եղբոր որդին՝ Հրանտ Բալասանյանը, փոխգնդապետի կոչումով ծառայում է հայկական բանակում, նրա ավագ եղբայրը՝ Անդրանիկ Սարգսյանը, որպես մարտական նավի հրամանատար, ծառայում էր Սեւծովյան նավատորմում. մահացավ 1984-ին: Վերջինս անունն այժմ կրում է Սմբատի թոռնիկը, իսկ թոռներից մեկն էլ՝ Սեւակը, պայմանագրային զինծառայող է: Նրանց փոխարինելու են Վիգենը, Սոսը, Վահեն, Արսենը՝ իրենց միջնորդված եղբայրների ու քույրերի հետ:

Բոլորն էլ կրում են Բալասանյան կամ Սարգսյան ազգանունը:

Հասկանալի պատճառներով մայիս ամսանունը մեր ժողովրդի համար դարձել է նվիրական: Երբեմն մտովի թերթում են Մեծ հայրենականի հաղթանակի մեջ հայ ժողովրդի ներդրումն մասին պատմող փաստերը եւ զարմանում, թե այդ ինչ ֆենոմեն է առաջնորդել հայ ժողովրդին, որ ամեն տեղ, ամեն ինչում եղել է առաջինը՝ կարծես թե այդ կռիվը, այդ պատերազմը նախ իրենն են եղել եւ միայն հետո՝ ուրիշինը: Համայնքի ղեկավար Կարո Թավադյանը, ում գյուղի տարեցները հին տվորույթով նախագահ են անվանում, նախորդ օրը հանդիպել էր նախկին զինվորին, նրան հրավիրել հաղթանակներին նվիրված հանդիսությանը եւ խնդրել, որ ոտքով չգնա, սպասի իրեն: Խոստացավ, բայց խոսքը չպահեց: Դեռ ոտքերի մեջ ուժ է զգում, չնայած արդեն ծեռնափայտ էլ ունի: Հուշարձանն այնքան էլ հեռու չէ՝ տնից 200-300 մետրի վրա: Եվ հետո, ուրիշ հմայք ու հաճույք կա այդ տոնական օրը քայլելու, համագյուղացիներին տեսնելու, նրանց շնորհավորելու, նաեւ նրանց շնորհավորանքներն ընդունելու մեջ: Մի բան էլ կար, որ ստիպում էր հին զինվորին ոտքով մոտենալ հուշարձանին: Հուշարձանը կանգնած է Սմբատ Բալասանյանի հայրական տան հարեւանությամբ, այն տարածքում, որտեղ անցել են նրա մանկությունն ու պատանեկությունը: Ծանոթ տարածքի քար ու թուփը քաղցր հուշեր են արթնացնում: Հուշարձանը շրջապատող պտղատու այգու պարսպի երկայնքով պապեական պղնձե կաթսաների մեջ մատաղի միս է եփվում: Փորձում է շրջանցել, բայց նրան նկատել եւ սպասում են... Եվ հետո, մատաղից չի կարելի հրաժարվել: Հենց առաջին օջախի մոտ նրան են մեկնում լավաշի մեջ փաթեթված՝ գոլորշի արձակող մատաղը: Մատաղը հայրենիքի սահմանին կանգնած զինվորի համար է: Հին զինվորը շշմուշում է. «Ընդունելի լինի»: Ամեն...

Սմբատ հայրն ու Ասյա մայրիկը:

Նոր ժամանակներում զինվորական մասնագիտությունը, զինվորական աշխատանքը մեր առօրյայի մի մասն են դարձել: Հայ մարդու համար զինվորականի նկատմամբ դարերից եկող հարգանքը նոր բովանդակություն ու իմաստ է ստացել: Երեւոյթի մասին խոսելն ուղղակի ավելորդ է, բայց դրա ճշմարտացիության առիավատչյան ակնհայտ է: Մեր օրերում նույնիսկ մանկահասակ երեխան, ով հեծանիվ գնելու համար խնայողություններ է կուտակել, այն նվիրաբերում է սահմանում ծառայող «օտար» հոպարներին:

Սքանաց տոհմի նկատմամբ համընդհանուր հարգանքն ամբողջական են դարձնում Սմբատ Բալասանյանի զարմիկները: Ժողովրդական խոսքը հղկվում է ժամանակի աղացով ու դառնում ավելորդություններից ազատված ճշմարտություն: Զորօրինակ՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում...

Սմբատի եղբոր որդին՝ Հրանտ Բալասանյանը, փոխգնդապետի կոչումով ծառայում է հայկական բանակում, նրա ավագ եղբայրը՝ Անդրանիկ Սարգսյանը, որպես մարտական նավի հրամանատար, ծառայում էր Սեւծովյան նավատորմում. մահացավ 1984-ին: Վերջինս անունն այժմ կրում է Սմբատի թոռնիկը, իսկ թոռներից մեկն էլ՝ Սեւակը, պայմանագրային զինծառայող է: Նրանց փոխարինելու են Վիգենը, Սոսը, Վահեն, Արսենը՝ իրենց միջնորդված եղբայրների ու քույրերի հետ:

Բոլորն էլ կրում են Բալասանյան կամ Սարգսյան ազգանունը:

Հասկանալի պատճառներով մայիս ամսանունը մեր ժողովրդի համար դարձել է նվիրական: Երբեմն մտովի թերթում են Մեծ հայրենականի հաղթանակի մեջ հայ ժողովրդի ներդրումն մասին պատմող փաստերը եւ զարմանում, թե այդ ինչ ֆենոմեն է առաջնորդել հայ ժողովրդին, որ ամեն տեղ, ամեն ինչում եղել է առաջինը՝ կարծես թե այդ կռիվը, այդ պատերազմը նախ իրենն են եղել եւ միայն հետո՝ ուրիշինը:

Համայնքի ղեկավար Կարո Թավադյանը, ում գյուղի տարեցները հին տվորույթով նախագահ են անվանում, նախորդ օրը հանդիպել էր նախկին զինվորին, նրան հրավիրել հաղթանակներին նվիրված հանդիսությանը եւ խնդրել, որ ոտքով չգնա, սպասի իրեն: Խոստացավ, բայց խոսքը չպահեց: Դեռ ոտքերի մեջ ուժ է զգում, չնայած արդեն ծեռնափայտ էլ ունի: Հուշարձանն այնքան էլ հեռու չէ՝ տնից 200-300 մետրի վրա: Եվ հետո, ուրիշ հմայք ու հաճույք կա այդ տոնական օրը քայլելու, համագյուղացիներին տեսնելու, նրանց շնորհավորելու, նաեւ նրանց շնորհավորանքներն ընդունելու մեջ: Մի բան էլ կար, որ ստիպում էր հին զինվորին ոտքով մոտենալ հուշարձանին: Հուշարձանը կանգնած է Սմբատ Բալասանյանի հայրական տան հարեւանությամբ, այն տարածքում, որտեղ անցել են նրա մանկությունն ու պատանեկությունը: Ծանոթ տարածքի քար ու թուփը քաղցր հուշեր են արթնացնում: Հուշարձանը շրջապատող պտղատու այգու պարսպի երկայնքով պապեական պղնձե կաթսաների մեջ մատաղի միս է եփվում: Փորձում է շրջանցել, բայց նրան նկատել եւ սպասում են... Եվ հետո, մատաղից չի կարելի հրաժարվել: Հենց առաջին օջախի մոտ նրան են մեկնում լավաշի մեջ փաթեթված՝ գոլորշի արձակող մատաղը: Մատաղը հայրենիքի սահմանին կանգնած զինվորի համար է: Հին զինվորը շշմուշում է. «Ընդունելի լինի»: Ամեն...

ՌԵՏԻԿԻ ԳԱՅՐԱՊԵՏՆԱՆ

Լիճքվազի հանքավայրում 18,7 տոննային համարժեք ոսկի է գնահատվել

Ռուսաստանում արծաթի խոշորագույն արտադրող եւ ոսկու արդյունահանող առաջատար Polymetal Plc («Պոլիմետալ») ընկերությունը դեռեւս 2014թ. Մոյնբերի կեսին ձեռք բերեց Կապանից ոչ հեռու տեղակայված Լիճքվազ երկրաբանահետախուզական նախագծի բաժնետոմսերի 25%-ը՝ 3.5 մլն դոլար արժողությամբ իր բաժնետոմսերի հաշվին, միաժամանակ համաձայնեցնելով ակտիվներում իր մասնաբաժնի ավելացումը՝ մինչեւ 50%:

տոննա) համարժեք ոսկի՝ ստորգետնյա եղանակով մշակելու համար, ասվում է ընկերության հաղորդագրությունում: Լիճքվազի հանքավայրի պաշարները կազմում են 4,3 մլն տոննա՝ 4,2 գ/տ պարունակությամբ, ինչը համապատասխանում է 600 հազար ունցիային համարժեք (18,7 տոննա) ոսկու: Հանքային պաշարները հաստատվել են CSA Global անկախ աուդիտորական ընկերության կողմից:

2016թ. Polymetal-ը ծրագրում է Լիճքվազում լրացուցիչ հորատում անցկացնել, որպեսզի 2017թ. երրորդ եռամսյակում գնահատի հանքավայրի պաշարները ըստ JORC-ի եւ նախապատրաստի Կապանի եւ Լիճքվազի նախագծերի շահա-

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Այոնիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի, ֆիզկուլտուրայի ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 1-ի) եւ բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 2-ի):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծեւ 1),
2. Բարձրագույն կրթության մասնավորության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. հունիսի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. հունիսի 3-ին, ժամը 14:00-ին Այոնիքի մարզի Հր. Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, Այոնիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում թաղ., 2/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)61-22-90 կամ (0285)2-47-90 հեռախոսահամարներով:

Հավերժ են արդյոք պատերազմները

Դարձյալ հիշենք մարդկության կյանքի այն տարբերակումը, որ նա բաժանվում է երեք մեծ շրջանի. վայրենություն, բարբարոսություն եւ քաղաքակրթություն: Երրորդ շրջանը բնորոշվում է նրանով, որ տնտեսական հիմքի, այն է, մասնավոր սեփականության հիմքի վրա առաջացան քաղաքակրթության մյուս աստիճանները:

ե, որ քաղաքակրթության շրջանը 5-10 հազար տարեկան է եւ նույնքան ժամանակ էլ կազմակերպված պատերազմներ են մղվում հանուն հարստության:

Մի անգամ եւս հիշենք Ֆրիդրիխ Էնգելսի խոսքերը՝ «Քաղաքակրթության վճռական եւ վերջնական նպատակը եղել է մնում է հարստությունը, հարստությունը եւ դարձյալ հարստությունը»:

Եվ հանուն այդ բաղձալի, ամենաքաղցր հարստության, պետությունները եւ ազգերը 5-10 հազար տարի է հռչատում են իրար: Բոլոր պատերազմները, դասակարգային պատերազմները նույնպես, վերջին հաշվով մղվել են հարուստներին եւ իշխանություններին էլ ավելի հարստացնելու համար:

Մի պահ փորձ կատարվեց (1917թ. Ռուսաստան, կոմունիստներ) վերացնել մասնավոր սեփականությունը՝ պահպանելով քաղաքակրթության մյուս բաղկացուցիչ մասերը, եւ բոլորս ակամատես եղանք կոմունիստական համակարգի փլուզմանը:

Սիրելի սովորական շարքային մարդ, դու համառորեն կառչած ես ընտանիքին եւ քաղաքակրթության մյուս բաղադրիչներին՝ չգիտակցելով, որ դրանով նույնպես նպաստում ես պատերազմների հավերժացմանը:

Մեկ հայրենիք, մեկ լեզու, մեկ ազգ՝ առանց ընտանիքի, առանց սեփականության, առանց կրոնների: Մեկ պետություն եւ անդասակարգ հասարակություն՝ առանց կաշառակերության, առանց պատերազմների եւ անարեւելության. ասի մարդկության ապագան:

Նրա չորրորդ՝ լավագույն ժամանակաշրջանը:

Վ. Թադևոսյան, Լ. Դավթյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ Վանյա Գալստյան



Կյանքից հեռացավ վաստակաշատ մանկավարժ եւ կազմակերպիչ Վանյա Մայրադի Գալստյանը:

Ծնվել է 1933թ. հունվարի 1-ին Գորիսի շրջանի Մալդաշ (այժմ՝ Քաշունի) գյուղում, բազմանդամ գյուղացու ընտանիքում: Ունեցել է մեկ եղբայր եւ հինգ քույր:

11 տարեկանում գրկվել է հորից: Սովորել է գյուղի տարրական դպրոցում (1941-45թթ.), այնուհետեւ ուսումը շարունակել Տանձավերի 7-ամյա դպրոցում, գերազանցությամբ ավարտել 1948թ.:

Նույն տարում հաջողությամբ հանձնել է քննություններ եւ ընդունվել Գորիսի մանկավարժական ուսումնարան: Գորիսի ուսումնարանում ստացել է մանկավարժական առաջին հիմնարար գիտելիքները: Նրան դասավանդել է Գորիսի հայտնի մանկավարժներ: ԸՆԿ. Գալստյանը միշտ հատուկ սիրով է հիշել ուսումնառության այդ տարիները, իր ընկերներին, կյանքի դժվարությունները: 1952թ. գերազանցության դիպլոմով ավարտել է մանկավար-

ժական ուսումնարանը եւ նույն թվին առանց քննությունների ընդունվել Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը:

1956թ. գերազանցության դիպլոմով ավարտել է ինստիտուտը եւ աշխատանքի անցել Կաթնառատի 8-ամյա դպրոցում, մեկ տարի հետո դարձել նույն դպրոցի տնօրեն:

1962թ. տեղափոխվել է Ողջիի միջնակարգ դպրոց, աշխատել ուսուցիչ, հետո՝ ուսմասվար:

1965թ. Քաջարանի Աջափնյակ թաղամասում բացվել է նոր դպրոց, որի տնօրեն Ա.Կարապետյանը նրան

հրավիրել է աշխատելու ուսմասվար: Երկու տարի աշխատելուց հետո Վ.Գալստյանը Քաջարանի թիվ 1 դպրոցում նշանակվել է տնօրեն՝ աշխատելով մինչեւ 2003թ.:

Սիրելի է իր աշխատանքը, դասավանդած առարկան: Իր սաների մեջ անսահման սեր է առաջացրել պոեզիայի նկատմամբ: Հատուկ վերաբերմունք է ունեցել Համո Սահյանի ստեղծագործությունների հանդեպ: Միշտ կարդում էր, արտասանում:

Նրա օրինակով շատ շրջանավարտներ ընտրել են մանկավարժի մասնագիտություն: Ունի բազում երեւելի շրջանավարտներ:

Տարիների նրա անբասիր ծառայությունը գնահատվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, բազմաթիվ մեդալներով ու կրծքանշաններով:

Քաջարան քաղաքի պատվավոր քաղաքացի էր:

Ընտանիք էր կազմել 1959թ., ունի երեք զավակ, վեց թոռ:

Հրաշալի մանկավարժի ու կազմակերպչի, բարեհամբույր մարդու եւ հոգատար ծնողի հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, գործընկերների եւ սաների սրտում:

Քաջարանի քաղաքապետարան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Այոնիքի մարզի «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ) ուսուցիչ թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հունիսի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հունիսի 3-ին, ժամը 12:00-ին, Այոնիքի մարզի Կապանի N10 միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /0285-2-55-92/ հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Այոնիքի մարզի «Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն /4.25դասաժամ/, ֆիզիկա /2 դասաժամ/, ինֆորմատիկա /3դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016 թվականի հունիսի 1-ը, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2016 թվականի հունիսի 3-ին ժամը 14: 00-ին Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոցում՝ Վաչագան թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել 094815798:



Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով 2016/17 ուստարվա առկա ուսուցման ընդունելությունն հետևյալ մասնագիտություններով

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները		Ընդունելության տեղերը			Ուսման վարձի չափը, դրամ
		մրցութային	ոչ մրցութային	անձնոր	այդ թվում՝ ժամկետային գիմնորական ծառայությունից զորացրված զինորդների տեղ	վճարովի	
031101.00.6	Տնտեսագիտություն						
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Ֆ(գ)**	Հլ(գ)*	2		20 450000
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ						
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**	Հլ(գ)*	4		18 450000
072401.00.6	Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում						
	072401.01.6 Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլ(գ)*	4	1	14 390000
071501.00.6	Մետալուրգիա						
	071501.01.6 Մետալուրգիա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլ(գ)*	4		12 390000

(գ) գրավոր
Հլ գ Հայոց լեզու եւ գրականություն

Մ Մաթեմատիկա
Ֆ Ֆիզիկա

* Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

** ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ղեկավարները անվճար (բացառությամբ «Տնտեսագիտություն» մասնագիտության) ուսուցման համակարգի ընդունելության մրցութային մասնակցելու համար մասնագիտությունների եւ քննությունների ցանկում երկու աստղանիշով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից բոլոր միասնական քննությունները հանձնող ղեկավարները օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցութային մասնակցելու համար ղեկավարները մասնագիտությունների եւ քննությունների ցանկում երկու աստղանիշով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Դիմորդների փաստաթղթերի ընդունման եւ այլ տեղեկությունների համար օգտվել ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կայքի՝ www.haphkapan.com «Դիմորդ» բաժնից կամ դիմել ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ՝ Բաղաբերդ 28:

☎ 5 46 80 ■ 5 34 61 ■ 093 15 00 26

ԽՈՍՔ ԴԻՇԱՏԱԿԻ

Ռուբիկ Մնացականյան



Ապրիլի 20-ի առավոտյան կյանքից հեռացավ ճանաչված ուսուցիչ, ինչու չէ, նաեւ ուսուցչապետ Ռուբիկ Հովհաննեսի Մնացականյանը: Մարդ, ով իր գիտակցական ողջ կյանքն անցկացրեց դպրոցական համակարգում՝ հոգու լույսն անմնացորդ սփռելով այդ գործին: Մարդ էր՝ անհատականություն, ով ժամանակի հոլովման մեջ երբեք չկորցրեց իր եսը, մանկավարժի ճիշտ գրչով ուղղեց եւ շատերին պարզապես մանկավարժ դարձրեց՝ ապագա սերունդների ճակատագիրը կասկածի տակ չթողնելու համար: Յուրացրել էր մարդ կոչվելու արվեստը, նա հայրենիքին ծառայեց իր գրչով, իսկական մանկավարժներ պատրաստելու իր հատուկ ոճով: Անհատականություն էր, ով աշխարհին նայում էր ոչ թե հոգնած ու մշուշված աչքերով, այլ ջինջ հայացքով, ով կյանքի ընթացքը դիտում էր ոչ թե մայրամուտային դալկացող-խամրող գույներով, այլ իրքեւ լուսաբաց հայտնության՝ լույսի ու գույնի զրնգուն խաղերով...

Ծնվել է 1948թ. Սիսիանի տարածաշրջանի Անգեղակոթ գյուղում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1966թ. ընդունվել է Խ.Աբրահամյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: Գիտելիքների մեծ պաշարով հարստացած՝ գործուղվել է Շաղատի միջն. դպրոց՝ մաթեմատիկայի ուսուցիչ:

Մեկ տարի խորհրդային բանակում ծառայելուց հետո կրկին անցել է մանկավարժական գործունեության: 1975-76 ուստարում աշխատել է Սիսիանի ժողկրթբաժնում՝ դպրոցական տեսուչ, այնուհետեւ՝ 1976-81թթ., Անգեղակոթի դպրոցի՝ տնօրեն: Ուսուցիչ պատրաստելու ծագումն ավելի շատ էր, քան տնօրեն լինելու ցանկությունը, հետեւաբար 1981-1995թթ. կրկին աշխատեց Սիսիանի ժողկրթբաժնում՝ նախ որպես տեսուչ, այնուհետեւ՝ ժողկրթբաժնի տեղակալ: 1996թ. սեպտեմբերից աշխատել է Սյունիքի մարզային տարածքային տեսչությունում՝ ավագ տեսուչ՝ հա-

մակարգելով Սիսիանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների գործունեությունը, իսկ 1998 թվականից՝ մարզպետարանի կրթության վարչությունում՝ նախ որպես առաջին կարգի մասնագետ, ապա՝ առաջատար մասնագետ՝ մինչեւ 2004 թվականը: 2004թ. սեպտեմբերի 1-ից աշխատել է Սիսիանի ավագ դպրոցում՝ ուսումնական գծով փոխտնօրեն՝ իր փորձն ու գիտելիքները, հոգու ջերմությունն ու կյանքի ավյունը փոխանցելով եւ ուսուցիչներին, եւ աշակերտներին:

Մինչեւ իր կյանքի վերջին օրը նվիրվեց դպրոցին՝ կիսատ չթողնելով եւ ոչ մի գործ:

Նա զուսպ էր, բայց եւ զգացունքային, խստապահանջ, միեւնոյն ժամանակ հոգատար ամենքի հանդեպ: Պատվով անցավ կյանքի փոքրիկների միջով եւ վայելեց իրեն շրջապատող մարդկանց անսպառ սերն ու մնայուն հարգանքը:

Սիրելի ընկեր Մնացականյան, Դուք դեռ շատ ասելիք ունեիք: Դպրոցական ձեռնարկներն ու դասացուցակը դեռ Ձեր սեղանին էին, դեռ վերջին զանգ ունեիք, դեռ սաներին կյանք ճանապարհելու պատգամ ունեիք...

Ավաղ, այս անգամ զանգը Ձեզ համար եղավ վերջինը, սաներն ու ուսուցիչները զանգի ու ծափահարությունների ներքո Ձեզ ճանապարհ դրեցին՝ յուրաքանչյուրն իր սրտում խեղդելով ցավի ճիչը...

Հավատացեք, Ձեր հոգու լույսը շողի պես միշտ լուսավորելու է մեզ, մեր դպրոցին: Ձեր ավանդները շարունակվելու են այնպես, ինչպես Դուք եք սերմանել...

Ամեն անգամ խոր կսկիծով ենք հիշելու Ձեր կորուստը, բայց ուրախությամբ ու ժպիտով կհիշենք մեր ապրածը:

Թող Ձեր լուսավոր հոգին հանգչի խաղաղությամբ:

Սիսիանի ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, զազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 766 425:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 3 սենյականոց բնակարան: Հասցե՝ ք.Կապան, Մուշեղ Հարությունյան 10, 9-հարկանի շենքի 5-րդ հարկ: Զանգահարել՝ (094) 421 400:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Արտուր Աթայանին՝ հոր՝ Արտավազ Ակրտչյանի մահվան կապակցությամբ:

Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՅՈՒՆԵՍԿՈՒՆ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՏՈՒՄ ԴՆԱՏԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® ճանաչված տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցե՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 04.05.2016թ.: